

ՀՐԱՌԷՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Կիրակի 12 Փետրուար, 1967 կէսօրէ վերջ ժամը 3.00ին Ս.Եկեղեցւոյս
Հանդիսասրահին մէջ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Աղօթք եւ Բացում:
2. Ընտրութիւն Տարեկան ծխական ժողովի Դիւանին:
3. Ընթերցում նախորդ Տարեկան ծխական ժողովի ատենազրուութիան եւ վաւերացում:
4. Հովիւի տարեկան զեկուցում:
5. Ծխական Խորհուրդի Տարեկան տեղեկագիր:
6. Ձեկուցում նախորդ Թեմական Պատգամաւորական ժողովի մասին:
7. Եկեղեցասէր Տիկնանց Միութեան զեկուցում:
8. Հայաստանեայց Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան զեկուցում:
9. Դպրաց Դասու Միութեան զեկուցում:
10. Ս.Սահակ եւ Ս.Մեսրոպ Ազգային Վարժարանի զեկուցում:
11. Կիրակնօրեայ Վարժարանի զեկուցում:
12. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ Ամսաթերթի զեկուցում:
13. Ելեւմտական տեղեկատուութիւն եւ վաւերացում 1967 տարւոյ պիւտճէի:
14. Վերստուգիչ Յանձնաժողովի տեղեկատուութիւն:
15. Առաջարկ ծխական Խորհուրդի կողմէ ծխական Խորհուրդի անդամներու թիւը բարձրացնելու 7էն 9ի:
16. :* Հարցեր ներկայացուած տեղեկագիրներու շուրջ:
17. Ընտրողական Յանձնախումբի տեղեկատուութիւն:
18. Ընտրութիւն քուէախոյզ Յանձնախումբի անդամներուն:
19. Ընտրութիւն ծխական Խորհուրդի չորս դադարեալ եւ մէկ հրաժարեալ անդամներու եւ երկու նոր անդամներու:
20. Նոր հարցեր:
21. Աղօթք եւ Փակում:

Փետրուար 1, 1967

Հովիւ եւ ծխական Խորհուրդ

ԱՂՕԹՔ ՏԱՐԵԿԱՆ ԺԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Շնորհէ մեզի, ով Տէր, որ Բու Սուրբ Հոգիդ առաջնորդ ըլլայ մեզի եւ արդիւնաւորէ մեր որոշումներն ու ծրագիրները մեր ծուխին քարիքին համար: Գոհութիւն կու տանք Զեզի բոլոր այն օրհնութիւններուն համար զորս մեզի պարգեւեցիր անցեալ տարուան ընթացքին, եւ կ'աղօթենք որ մենք, եկեղեցւոյ անդամներս, կարենանք միասնաբար գործել առաւել ոյժով եւ եռանդով յառաջիկայ տարեշրջանին:

Օգնէ մեզի, ով Տէր, որ մեր անձերը ընծայենք Զեզի եւ պատրաստ ըլլանք զոյելու մեր ժամանակը, դրամը եւ տաղանդը Բու Սուրբ Փառքիդ եւ Թագաւորութեանդ տարածման համար: Առաջնորդէ մեզ, կ'աղաչենք Զեզի, եկեղեցւոյս ծխական Խորհուրդի եւ Վերստուգիչ անդամներու ընտրութեանց մէջ: Շնորհէ որ նոր ընտրուելիք անդամները հաւատարմութեամբ եւ սիրով կատարեն իրենց պարտականութիւնները:

Կը զովաբանենք Զեզ, Տէր Աստուած մեր, բոլոր այն ծառաներուդ համար որոնք անձնուիրաբար գործած են Բու հոգեւոր այգիիդ մէջ ու պաշտած Բու Սուրբ Անունդ: Կը փառաբանենք Զեզ մանաւանդ անոնց համար, որոնք մեկնած են անդարձ եւ ննջած ի Քրիստոս: Անոնց յաւիտեմական հանգիստ պարգեւէ ով Տէր:

Ով Ամենակալ Տէր, Բու լոյսդ մշտապէս թող փայլի մեր վրայ եւ առաջնորդէ մեր քայլերը դէպի ճշմարտութեան ճանապարհը:

Դուք ով Տէր, զիտես մեր պէտքերը եւ կարիքները մեր խնդրածէն եւ հասկցածէն աւելի. եւ Զեզի, Որդիիդ եւ Ամենասուրբ Հոգիիդ հետ, կը վաշելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

PRAYER FOR AN ANNUAL PARISH ASSEMBLY

Grant, O Lord, that thy Holy Spirit may preside over us now in all our concerns and deliberations for the welfare of this parish. We thank thee for all the blessings of the past year, and pray that we may go together from strength to strength in the year before us. Help us all to dedicate ourselves to thee, and to be ready to make sacrifice of time and money for the extension of thy kingdom.

Guide us, we beseech thee, in the choice of our Parish Council and Auditing Committee, and may they discharge their duties faithfully.

We praise thee for those thy servants who labored and worshipped here before us, and especially for those who have departed this life since we last met together. Grant to them eternal rest, O Lord, and let thy light perpetual shine upon them; through Jesus Christ our Lord. For thou, O Lord almighty, knowest our needs and our wants to be more than that which we ask or comprehend; and to thee, with the Son and the all-holy Spirit, is fitting glory, dominion, and honour, now and always and unto the ages of ages. Amen.

Թորոնթոյի Ս.Երրորդութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ համայնքը կը բոլորէ իր եկեղեցւոյ բացման տասներեքերորդ ամեակը, երբ ափ մը հայեր հարգատ զաւակները Հայց.Առաքելական Եկեղեցւոյ, նախանձախնդրութիւնը ունեցան ունենալու իրենց սեպական Աղօթքի Տունը, այս հիւրընկալ փերուն վրայ: Հոս, Աղօթքի այս Տան մէջ տաղաւարելու համար հայ ցեղին հոգեկան եւ իմացական հարստութեան զանձարանը: Եւ ահա անկէ ասդին անցած են տասներեք երկար տարիներ, որոնց ընթացքին համայնքն ու ժողովուրդը ստուարացաւ նորահաստատ հայ գիտակից ընտանիքներով, որոնք ի մասնաւորի սա վերջին տասը տարիներու ընթացքին եկան հաստատուելու այս հիւրընկալ փերուն վրայ, իրենց այս եկեղեցւոյ հիմնադիր հարգատներուն հետ միասին շարունակելու այն հայկական ցեղային աւանդութիւնը, որը մերը եղած է հոն ուր որ զացած ենք:

Մեզի համար հոգեկան գոհունակութիւն է վայելել համերաշխ ու պարտաճանաչ գործակցութիւնը հանդէպ Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Եկեղեցւոյ, որ մայրն ու դաստիարակողն է իր ծոցէն ծնած իր հարգատ զաւակներուն:

Այս նոյն ոգիով ու առաւել սիրով ամրապնդուած պէտք ենք ջանալ յաւելտ վառ պահել մեր բարոյական ու հոգեւոր հայրենիքը— որպէսզի անով միշտ պայծառանայ ու անհատանայ մեր ժողովուրդը այս հիւրընկալ փերուն վրայ, իր ցեղային ազնիւ առաքինութիւններով իր նպաստը բերելու այս մեծ երկրին, յառաջդիմութեան ու բարգաւաճման:

Տար Աստուած մեզ բոլորիս առաւել շնորհք եւ իմաստութիւն միասնական ջանքերով հետապնդելու հայը հայ պահելու մեր սուրբ պայքարը—մեր նախատակներու խնկելի յիշատակովը:

Իբրեւ այս համայնքին հովիւը ջանք չենք խնայած մեր կարողութեանց լաւագոյնը նուիրելու այս համայնքին գոհողութեանց ու նուիրումին:

Արդար ըլլալու համար պէտք է խոստովանիմ որ ունեցած եմ իմ տկարութիւններս ու ունիմ զանոնք տակաւին, եւ սակայն Ձեր Պաշտօնը աղօթքներուն ու բարի մաղթանքներուն շնորհիւ է որ արժանի պիտի ըլլամ Տիրոջ այգիին մշակ մը ըլլալու, լաւագոյնս արժեւորելու համար այն կոչումին, երբ կոչուեցանք Ս.Եկեղեցւոյ սպասաւորութեան:

Երախտագիտութեան խօսք ունինք ծիական Խորհուրդին ու եկեղեցւոյ յարակից մարմիններով զլիաւորուած մեր համայնքին, որոնք ոչ մէկ ջանք խնայեցին թեւ եւ թիկունք ըլլալու մեր տկար անձին, տալու համար մեր ծառայութիւնը բոլորով սրտիւ ու անսակարկ նուիրումով:

Անցնող տարուան ընթացքին քաղաքէս բացակայեցանք հետեւեալ

առիթներուն.-

- ա. Փետրուար 27, 1966 Մեծ Պահոց Բ. Կիրակիին, երբ պաշտօնով նիւ Եորք կը գտնուէինք, Դպրաց Դասերու Միութեան Կեդրոնական Վարչութեան ժողովին առիթով:
- բ. Ապրիլ 29-30, 1966 եւ Մայիս 1, 1966 Թեմական Պատգամաւորական ժողովին առիթով նիւ ժըրզի կը գտնուէինք:
- գ. Յուլիս 11-22, 1966, երբ արծակուրդով էվընսթոն կը գտնուէինք մասնակցելու հոն տեղի ունեցող Ս. Ներսէս Աստուածաբանական Վարժարանի դասընթացքներուն:
- դ. Հոկտեմբեր 22-23, 1966ին երբ Բիչմընտ Վիրճինիա կը գտնուէինք Դպրաց Դասերու Միութեան Տարեկան Համագումարին առիթով:

1966 տարւոյ ընթացքին բարեբախտութիւնը ունեցանք վայելելու այցելութիւնները մեր հոգեւոր եղբայրներուն, որոնք իրենց ներկայութեամբ պայծառացուցին Ս. Եկեղեցիս, Ս. Պատարագի մատուցմամբ եւ քարոզախօսութեամբ:-

- ա. Մարտ 13, 1966 Մեծ Պահոց Դ. Կիրակիին, շնորհաբեր այցելութիւնը ընդունեցանք Թեմիս Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն Ս. Արք. Մանուկեանի, Թեմական-կազմակերպչական գործերով: Ս. Հայրը ներկայ եղաւ Արեւազալի ժամերգութեան եւ Ս. Պատարագին եւ տուաւ իր հոգեշունչ պատգամը: Այս առիթով Առաջնորդ Ս. Հայրը զնահատելով եկեղեցւոյս հաւատարիմ դպիրներէն Վահէ Սվաճեանի եկեղեցասիրութիւնը, անոր քարգեւեց Ուրար կիւելու մասնաւոր արտօնութիւն:
- բ. Մայիս 8, 1966 Կիրակի օր Ս. Եկեղեցւոյս մէջ պատարագեց եւ քարոզեց Հոգեշնորհ Տ. Մեսրոպ ծայրագոյն Վարդապետ Սէմէրճեան, որ հիւրաբար քաղաքս կը գտնուէր Ս. Ներսէս Աստուածաբանական Վարժարանի կազմակերպած շաբաթավերջի Դասընթացքին առիթով:
- գ. Յուլիս 24, 1966 Կիրակի օր Ս. Պատարագին ներկայ եղաւ ու քարոզեց Վաշինգտոնի Հոգեւոր Հովիւ Հոգ. Տ. Գարեգին Ժ. Վրդ. Գազանճեան:
- դ. Օգոստոս 21, 1966 Կիրակի ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕՐուան առիթով պատարագեց եւ քարոզեց Վարիչ-Քարտուղար Արժանաշնորհ Տ. Լեւոն Քահանայ Առաքելեան:
- ե. Հոկտեմբեր 9, 1966 Կիրակի օր Ս. Թարգմանչաց տօնին առիթով պատարագեց և քարոզեց Հոգ. Տ. Յուսիկ Ժ. Վրդ. Պաղտասեան, Հոգեւոր Հովիւը Իսրայէլի Հայոց, եւ Պատրիարքական Կոխանորդը, որ հիւրաբար քաղաքս կը գտնուէր:
- զ. Նոյեմբեր 20, 1966 Կիրակի օր, հովիւներու փոխանակութիւն ունեցանք Գլիվլէնտի Ս. Գրիգոր Նարեկացի Հայց. Եկեղեցւոյ Հովիւին և մեր միջեւ:

Բաց աստի Յունիս 12, 1966 Կիրակի օր յետ միջօրէին անակնկալ այցելութիւնը Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Ս. Եպիսկոպոս Աճէմեանի, որ իր ներկայութեամբ պատուեց մեր Հայ Դպրոցի Ամավերջի Հանդէսը, եւ տուաւ իր քարոյական եւ նիւթական քաջալերութիւնը հայ դպրոցի քարգաւաճման ի նպաստ:

Այն ինչ որ մեր պարտքը եղած է, ջանացած ենք այցելուութիւններ տալ համայնքիս անդամներուն, զանազան առիթներուն անոնց տանելով Հայց. Եկեղեցւոյ օրհնութիւններն ու միօթարութիւնները:

Վերջացնելէ առաջ կ'ուզենք մեր երախտագիտութեան խօսքը ըսել նախորդ թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Սիոն Ս. Արք. Մանուկեանին, որուն առաջնորդութեան օրերուն ու հայրական հոգածութեան շնորհիւ մեր համայնքը նոր շրջան մը բոլորեց, շրջան մը մեր երազներու թռիչքին ու մեր արդար պահանջներուն իրականացման: Եւ կը մաղթենք որ նորընտիր թեմակալ Առաջնորդ Ս. Հայրը նոյն հոգածութեամբ շարունակէ առաջնորդել թորոնթոյս համայնքը, որպէսզի չմարի երբեք յոյսին եւ հաւատքին կրակը հայ ազգային լեզուին ու ոգեկան արժէքներուն հանդէպ, այս համայնքին կեանքին մէջ:

Ի վերջ բանիս մեր խորագագ երախտիքը կ'ուզենք յայտնել կրկին անգամ Ս. Եկեղեցւոյս ծխական Խորհուրդին ու անոր արժանաւոր Ատենապետին, եւ իրենցմով գլխաւորուած եկեղեցապատկան մարմիններուն ու Ձեզի Սիրելի ծխական անդամներ, եւ կը մաղթենք որ նոյն ոգիով շարունակենք մարտակից ըլլալ իրարու հայեացքնիս ուղղած դէպի մեր Ս. Գրական Մայրենի Հողն ու Լոյսոյ Խորան Ս. Էջմիածինը:

Աստուած մեզ օգնական

Մնամ սիրոյ ողջոյնիւ

Աղօթարար

Ժիրայր Արեղայ Թաշմեան

Փետրուար 1, 1966

ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

1966 Թուականին

''Արասջիր ըստ պիտոյից Տաճարին Տեառն Աստուծոյ'' : Ա.Եզրաս Ը.19 :
ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԴՐՈՇՄ.—

1. Ճոն մանչ զաւակը Տէր եւ Տիկ.Ալէքսանդր Ալէքսանեանի :
2. Լուսի դուստրը Տէր եւ Տիկ.Արթօ Կիւլեանի :
3. Միքայէլ Արման մանչ զաւակը Տէր եւ Տիկ.Կասթոն Սերոբեանի :
4. Շահէ Րիչըրտ առջինեկ մանչ զաւակը Տէր և Տիկ.Տիգրան Թոսունեանի :
5. Պետրոս մանչ զաւակը Տէր և Տիկ.Սարգիս Թոսունեանի :
6. Դաւիթ—Յակոբ—Յովսէփ առջինեկ մանչ զաւակը Տէր և Տիկ.Եղուարդ Գալայճեանի :
7. Արսէն Անթընի առջինեկ մանչ զաւակը Տէր և Տիկ.Յակոբ Մուրատեանի :
8. Արիս Հերրի մանչ զաւակը Տէր և Տիկ.Բարսեղ Քէրէճեան Մոնթրիալէն :
9. Շուշան Լիլի դուստրը Տէր և Տիկ.Յակոբ Թոսունեանի :
10. Գարըլ Լիգա դուստրը Տէր և Տիկ.Սուրէն Աճէմեանի
11. Թանիա դուստրը Տէր և Տիկ.Յակոբ Պուտաբեանի :
12. Ալէքսանդր Հայկ Միքայէլ մանչ զաւակը Տէր 4և Տիկ.Տինօ Սէֆէրեանի :
13. Բուպինա դուստրը Տէր և Տիկ.Զոհրապ Տէր Մկրտիչեանի :
14. Ազնիւ դուստրը Տէր և Տիկ.Գրիգոր Գուլոմճեանի :
15. Լիսա Սիրվարդ դուստրը Տէր և Տիկ.Յակոբ Պերեճիկեանի :
16. Վիգէն Վիքթոր մանչ զաւակը Տէր և Տիկ.ճորճ Նալպանտեանի :
17. Եղուարդ մանչ զաւակը Տէր և Տիկ.Տիգրան Ղազարեանի :
18. Բաֆֆի Բալճ առջինեկ մանչ զաւակը Տէր և Տիկ.Պարգեւ Խոճաճեանի :
19. Նէնսի Լինն դուստրը Տէր և Տիկ.Արնըլտ Վարուճան Գրիգորեանի :

ԴՐՈՇՄ.—

1. Պարոն Նորմըն Գուլտրը Անգլիորն Եկեղեցւոյ անդամ ծնունդով,
2. Պարոն Էտուարտ Լուրա Ղաթի Բրեսպիթըրեան Եկեղեցւոյ անդամ ծնունդով :
Վերոյիշեալ անձերը Դրոշմուելով հաղորդական անդամները դարձան
Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Եկեղեցւոյ :

ՊՍԱԿ ՍՈՒՐԲ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ:—

1. Տէր և Տիկ. Օսկան Քիւլիւքէօզընեան Ապրիլ 16, 1966
2. Տէր և Տիկ. Կարապետ Արզումանեան Ապրիլ 17, 1966
3. Տէր և Տիկ. Անդրէաս Գալայճեան Մայիս 28, 1966
4. Տէր և Տիկ. Ճորճ Յակոբեան Յունիս 18, 1966
5. Տէր և Տիկնորմըն Գոլտըր Յուլիս 9, 1966
6. Տէր և Տիկ. Լէօ Րէիզեան Յուլիս 23, 1966
7. Տէր և Տիկ. Նուպար Թոսունեան Յուլիս 23, 1966
8. Տէր և Տիկ. Յովհաննէս Սարգիսեան Օգոստոս 27, 1966
9. Տէր և Տիկ. Էտուարտ Լուքա Օգոստոս 27, 1966
10. Տէր և Տիկ. Սարգիս Քիւլիւքէօզընեան Դեկտեմբեր 25, 1966

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ.—

1. Կոստանդին Քէն Պասթամոֆֆ Յունուար 6, 1966
 2. Լեւոն Աճէմեան Փետրուար 24, 1966
 3. Զմրուխտ Քէչեան Յունիս 10, 1966
 4. Բարունակ Արզումանեան Սեպտեմբեր 13, 1966
-

Յարգելի անդամներ,

Նախ պարտք կը զգամ շնորհակալութիւն յայտնելու Ձեզի, ծխական Խորհուրդի պաշտօնակիցներուս կողմէ որ պաշտօնի կոչեցիք մեզ վարելու Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյս եւ համայնոյս բնական խորհուրդի գործերը: Գաղութիս հոգեւոր հովիւ Հայր Ժիրայր Թաշճեան եւ ծխական Խորհուրդիս անդամները, համերաշխ գործակցութեամբ ամէն ճիգ թափեցին արդարացնելու Ձեր անոնց հանդէպ ցոյց տուած վստահութիւնը:

Ուրախ ենք յայտարարելու որ ծխական Խորհուրդիս բոլոր օժանդակ մարմինները, ինչպէս նաեւ Թորոնթոյոյ գաղութը, իրենց բարոյական եւ նիւթական օժանդակութեամբ մեզի օգնած են մեծապէս եւ վստահ ենք որ նոյն ոգին պիտի շարունակեն ցոյց տալ ապագային, որուն համար մեր սրտագին գնահատանքը կ'ուզենք ներկայիւս յայտնել:

Նորընտիր ծխական Խորհուրդիս առաջին ժողովը տեղի ունեցաւ Փետրուար 23, 1966ին եկեղեցւոյս ժողովատեղւոյն մէջ ի ներկայութեան նախկին վարչութեան անդամներուն եւ նախագահութեամբ հոգեւոր հովիւ Հայր Ժիրայր Թաշճեանի: Նախկին վարչութեան նորընտիր ծխական Խորհուրդի փոխանցման գործողութիւնները լրանալէն վերջ, նորընտիր ծխական Խորհուրդը ընտրեց իր Դիւանը հետեւեալ կազմով:—

| | |
|------------------|-----------------------------|
| Օննիկ Ծալեան | Ատենապետ |
| Հրանդ Սուին | փոխ-Ատենապետ |
| Յակոբ Թոսունեան | Ատենադպիր |
| Կարօ Տէիրմէնճեան | փոխ-Ատենադպիր |
| Հերրի Արթինեան | Գանձապահ |
| Ժիրայր Փետերեան | փոխ-Գանձապահ |
| Հայկ Սէլեան | Խորհրդական եւ Դպրոցի Լիէզոն |

Ծխական Խորհուրդս ունեցաւ 50 կանոնաւոր ժողովներ Փետրուար 23, 1966էն մինչեւ Փետրուար 7, 1967:

Ծխական Խորհուրդս իր առաջին ժողովին մէջ մշակեց իր ծրագիրը 1966 տարեշրջանի որ կարելի է ամփոփել հետեւեալ գլխաւոր բաժանումներու մէջ:—

1. Գործակցիլ և օժանդակել ծխական Խորհուրդի Օժանդակ Մարմիններու, ապահովելու համար լաւագոյն արդիւնք:
2. Դասաւորել Թուականի կարգով այն բոլոր մշակութային հանդէսները եւ հասոյթաբեր ձեռնարկները որոնք ծխական Խորհուրդը կը նախատեսէ ունենալ 1966 տարեշրջանին:
3. Գահպանել եւ քաջալերել Թորոնթոյոյ գաղութեան սրտերուն մէջ գոյութիւն ունեցող ազգանուէր ոգին եւ բոլորել զիրենք մեր Ս. Հայաստանեայց

եկեղեցիքն եւ զոյգ Վարժարաններու շուրջ, որոնք եղած են դարերէ ի վեր աւան-
դապահները մեր կրօնական սրբութեանց եւ ազդակներ հայապահպանման:

4. Պատրաստել 1966 տարեշրջանի նախահաշիւը հասոյթներու եւ ծախքերու եւ
ջանաւ ամէն միջոցներով իրականացնել զայն:

5. Ոյժ տալ եւ միջոցներ ձեռք առնել անդամատուրքերու գանձումներուն կանո-
նաւորապէս եւ ունենալ սիւնակաւոր տետրակ մը եկեղեցւոյս անդամներուն որ ցոյց
տայ անոնց վճարումները իբր անդամատուրք կամ նուիրատուութիւն:

Ժխական Խորհուրդս իր պաշտօնավարութեան ընթացքին կազմակերպեց շարք
մը հանդէսներ, Մշակութային եւ Գեղարուեստական ձեռնարկներ, Դաշտահանդէս եւ
Պարահանդէս:

Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ Ն Ե Ր

1. Ապրիլ 24, 1966ին յարգելու համար յիշատակը ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ, միաս-
նականութեամբ պատշաճ հանդիսութիւն մը ունեցանք եկեղեցւոյս Հանդիսա-
սրահին մէջ:

2. Մայիս 6-7-8, 1966ին, շաբաթավերջին տեղի ունեցաւ Կրօնական Ուսմանց
Ժողով մը կազմակերպուած Ս.Ներսէս Աստուածաբանական Վարժարանի կողմէ
որ մեծ յաջողութեամբ վարեց Տիրացու Յովհաննէս Սրկ. Գասպարեան:

3. Մայիս 16, 1966ին, ժխական Խորհուրդս ճաշկերոյթ մը սարքեց ի պատիւ
մեր զոյգ վարժարաններու Տնօրէններուն եւ Ուսուցչական կազմին որոնք
նուիրումով եւ զոհաբերութեամբ մեծ աշխատանք կը տանին ջամբելով
կրօնական եւ տոմային կրթութիւն մեր մատաղ սերունդին:

4. Մայիս 22, 1966ին, ժխական Խորհուրդս կազմակերպեց Երգահանդէս-նուագա-
հանդէս մը, մենակատարութեամբ հայազգի անուանի արուեստագէտներու
յանձին Օփերայի երգիչ Տիկին Սելմա Քէլլիքեանի եւ տաղանդաւոր դաշնա-
կահար նորայր Արթինեանի, որոնք մեծապէս գնահատուեցան ներկաներուն
կողմէ:

5. Յունիս 11, 1966ին ունեցանք ժխական Խորհուրդիս տարւոյ առաջին պարա-
հանդէսը եւ Յունիս 19ին Դաշտահանդէսը: Երկու ձեռնարկներն ալ յաջո-
ղութեամբ կատարուեցան եւ ապահովեցին կարեւոր նիւթական հասոյթ մը:

Մեր գնահատանքը և շնորհակալութիւնը կ'ուզենք յայտնել Պր. Սեղրակ
Ատուրեանի որ, ինչպէս միշտ, շատ յաջող կերպով կազմակերպեց մեր
Դաշտահանդէսը:

6. Յունիս 12, 1966ին, տեղի ունեցաւ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ Ազգային Վարժա-
րանի Ամավերջի Հանդէսը: Գեղարուեստական բաժին մը տեղի ունեցաւ յաջող
մասնակցութեամբ Վարժարանի աշակերտներուն:

Հանդէսը վերջացաւ Պր. Պօղոս Սվամեանի խանդավառ և ներշնչիչ ելոյ-
թով և ներկաները մասնակցեցան հանգանակութեան արշաւի մը ի նպաստ
Վարժարանի որ հասաւ շուրջ 2000.00 Տոլարի:

7. Օգոստոս 20, 1966ին ծխական խորհուրդս հաւարոյթ մը կազմակերպեց եկեղեց-
ւոյս Հանդիսարահին մէջ ի Պատիւ Արժանաշնորհի Տ.ԼԵԼՈՆ Քահանայ Առաքել-
եանի, Վարիչ քարտուղարը նիւ Եորքի Մայր Տաճարի և Մշակութային Տան
շինութեան, որ յատկապէս Թորոնթօ այցելած էր, ի նպաստ Մայր Տաճարի
հանգանակութեան արշաւը սկսելու առաքելութեամբ:

Տէր ԼԵԼՈՆ իր բանախօսութեան մէջ ի վեր հանեց կարեւորութիւնը
Մայր Տաճարի կառուցման եւ կոչ ուղղեց զաղութիւն իրենց նիւթական օժան-
դակութիւնը բերելու այս սուրբ ծրագրին յաջողութեան համար:

8. Հոկտեմբեր 6, 1966ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին յատուկ
սրբատառ կոնդակին համաձայն, եւ Սրբոց Թարգմանչաց Տօնին առիթով եկեղեցւոյ
Հանդիսարահին մէջ տօնեցինք Աստուածաշունչի Տպագրութեան 300 ամեակը:

Բարեշնորհ Յովհաննէս Սարկաւազ Գասպարեան որ յատկապէս հրաւիրուած
էր էվրնսթընէն շատ հետաքրքրական եւ շինիչ բանախօսութիւն մը ըրաւ նիւթ
ունենալով ⁵ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԵ-
ՈՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՔ՝:

Բարեշնորհ Տիրացու Յովհաննէս Սրկ. Գասպարեան, տեղւոյս ՍԻԵՉԱՅԷՆ
Ռատիօկայանէն, բարեհաճ հրաւերով եւ կարգադրութեամբ Տնօրէնութեան,
Շաբաթ 8 Հոկտեմբեր, 1966ին, խօսեցաւ Անգլերէն լեզուով վերոյիշեալ նիւ-
թին շուրջ: Նոյն օրը ձայնասփռուեցաւ նաեւ եկեղեցական երգեր օրուան
փառատօնին առթիւ:

9. Հոկտեմբեր 16, 1966ին տեղի ունեցաւ Մասնաւոր ծխական ժողով մը որուն
ընթացքին ծխական խորհուրդի Ատենապետը ներկաներուն տուաւ մանրամասն
տեղեկատուութիւններ ծխական խորհուրդի վեցամսեայ գործունէութեան:
Օրակարգի կարեւոր նիւթն էր եկեղեցւոյ Սրահին վրայ Վարժարանի գործածու-
թեան համար յարկ մը բարձրացնելու ծրագիր մը: Պր. Ատենապետը նկարագրեց
ներկայ վարժարանի վիճակը որ պէտք եղած գոհացումը չի տար եւ շեշտեց
այն դժուարութիւնները և անպատեհութիւնները որ կը ներկայացնէ հանդիս-
արահը իբր դասաւանդութեան վայր և ներկաներուն ներկայացուց ծխական խոր-
հուրդի ծրագիրը յարկ մը բարձրացնելու համար: նկատի ունենալով որ ժողովը
մեծամասնութիւն չէր ներկայացներ, որոշ որոշման մը կարելի չեղաւ յանգիլ
եւ որոշուեցաւ Տարեկան Ընդհանուր ծխական ժողովին մէջ խորհրդակցութեան
նիւթ ընել զայն:

10. Դեկտեմբեր 10, 1966ին տեղի ունեցաւ եկեղեցւոյս Հանդիսարահին մէջ Պարա-
հանդէս-ձաշկերոյթ մը փառաւոր կերպով տօնելու համար Թորոնթոյի Հայց.
Եկեղեցւոյ կառուցման Տասներեքերորդ տարեդարձը: Պր. Գրիգոր Էլմասեան
օրուան յարգելի Ատենապետը մեծ յաջողութեամբ վարեց օրուան հանդիսութիւն
ները:

Պր. Օ. Ծալեան, ծխական խորհուրդի Ատենապետը, հակիրճ կերպով իր գնա-
հատանքը յայտնեց եկեղեցւոյ հիմնադիրներուն որ հակառակ այն ատենուան

փոքրաթիւ գաղութին հեռատեսութիւնը ունեցան մեծ նիւթական գոհողութիւննե-
րով կառուցանելու մեր այս գեղեցիկ եկեղեցին որ դարձած է կեդրոնը մեր
հաւատացեալ ժողովուրդին եւ է ու կը մնայ կարեւորագոյն ազդակը մեր ազգա-
պահպանման:

11. Առաջնորդ Ս. Հօր անդրանիկ այցելութիւնը.

Թորոնթոյայ գաղութը եւ ծխական խորհուրդս իր տարեշրջանը աւարտելու
նախօրեակին, քախտաւորութիւնն ունեցան ընդունելու Գերաշնորհ Տ. Թորգոմ
Ս. Եպիսկոպոս Մանուկեան, նորընտիր Առաջնորդը Հայոց Ամերիկայի և Գանատայի
որ իր առաջին թեմական այցելութիւնը տուաւ գաղութիս Ս. ծննդեան տօնին
առիթով, տալու մեզի իր սուրբ օրհնութիւնը և պատգամը:

Այն չորս օրերը որ Սրբազան Առաջնորդը Հայրը մեզի հետ անցուց եղան
հրճուանքի պահեր գաղութայնութեան համար: Ս. Հօր շինիչ եւ ներշնչող
քարոզները և դասախօսութիւնները ուղեցոյց մը պիտի ըլլան գաղութայնութեան,
ինչպէս նաեւ ծխական խորհուրդիս եւ օժանդակ մարմիններու յառաջիկայ գործու-
նէութեան:

ՃԽԱՆԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Ծխական խորհուրդիս առաջին քայլը եղաւ համերաշխական ոգիով գործակ-
ցիլ մեր բոլոր օժանդակ մարմիններուն, հետեւիլ եւ աջակցիլ անոնց գործու-
նէութեանց, որպէսզի անոնց եւ մեր զանազան ձեռնարկները եւ աշխատանքները
յաջողութեամբ պսակուին:

Այս նպատակաւ խորհրդակցական ժողով մը ունեցանք ուր ներկայ էին մեր
օժանդակ մարմինները իրենց Դիւանով: Այս ժողովին մէջ ի վեր հանեցինք կարե-
ւորութիւնը 1966 տարեշրջանի համար ծրագիր մը պատրաստելու իւրաքանչիւր
օժանդակ կազմակերպութեան համար, ճշդելու զանազան ձեռնարկներու թուականնե-
րը որպէսզի խաչածեւումներ տեղի չունենան:

ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ. —

Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը որ տասներեք տարուան գործունէութիւն
մը ունի մեր գաղութին մէջ շատ օգտակար եւ կարեւոր դեր մը կը կատարէ և ունի
կատարելիք: Միութեան նպատակներէն մին է Քրիստոնէական հաւատքը վառ պահել
իր անդամներուն մէջ որպէսզի անինք ապրին մեր եկեղեցւոյ վարդապետութեան և
աւանդութեանց համաձայն: Ահա սուրբ և նուիրական առաքելութիւն մը որ արժանի
է ամէն գնահատանքի: Եկեղեցասէր Տիկնանց Միութեան հասութեաբեր ձեռնարկները
միշտ յաջողած են եւ կարեւոր բաժինով մը նիւթապէս օգնած եկեղեցւոյս եւ
դպրոցներու կարիքներուն: Կ

Կը մաղթենք որ նոյն ոգիով ու կորովով անոնք շարունակեն իրենց
ազգօգուտ գործունէութիւնը:

ԴՊՐԱՑ ԴԱՍ.—

Դպրաց Դասը Պր.Մինաս Սէլեանի ղեկավարութեամբ եկեղեցական երգերով եւ շարականներով ներդաշնակ փայլ մը կու տան մեր եկեղեցական արարողութեանց և գնահատանքի արժանի են:

Յիշատակութեան նոյնպէս արժանի է Պր.Վարդան Վարդանեան որ իբր Ատենապետ յաջողեցաւ համագործակցական ոգի մը ստեղծել եկեղեցւոյ Սարկաւազներու միջեւ, ներքին կանոնազրի մը պատրաստութեամբ եւ գործադրութեամբ:

Միակ պակասը որ ունէինք Երգեհոնահարի մը անհրաժեշտութիւնն էր: Ուրախ ենք ըսելու որ այդ հարցն ալ կարգադրուած է եւ Տիկիններ Գուլյուսմեան Գասարմեան և Մերաս փայլ մը կ'աւելցնեն եկեղեցւոյ երգեցողութեանց իրենց երգեհոնի մասնակցութեամբը:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ.—

Գնահատանքի արժանի են նոյնպէս մեր Կիրակնօրեայ Վարժարանի Տեսչուհի Տիկին Ա.Գարակէօզեան եւ իր աշխատակիցները որոնք անձնուիրաբար կը ջամբեն մեր պգտիկներուն կրօնական Դաստիարակութիւն:

ՍՂՍԱՀԱԿ ԵՒ Ս.ՄԵՍՐՈՊ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ.—

Ազգապահպանման ազդակներէն մին ալ մեր ազգային վարժարանն է: Գնահատանքի արժանի են նախկին Տեսուչ Պր.Յակոբ Պալեան եւ Ուսուցչական կազմը որ անձնուիրաբար նուիրուեցան մեր մանուկներուն տալու տոհմային կրթութիւն:

Կը ցաւինք որ Պր.Պալեան առողջական պատճառներով հրաժարեցաւ իր պաշտօնէն: Ուրախ ենք ըսելու որ Տիկ.Տ.Արթինեան ստանձնեց ներկայ տարեշրջանի Տնօրէնութեան պաշտօնը և իր տարիներու փորձառութեամբ մեծապէս օգտակար հանդիսացաւ մեր վարժարանին: Այս առթիւ ծխական խորհուրդս իր գնահատանքը կը յայտնէ Տիկ.Տ.Արթինեանի և իր Ուսուցչական կազմին:

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԱՐՄՆԱՅ.—

Ծխական խորհուրդս Ուսուցչական կազմին հետ խորհրդակցելէ յետոյ համոզում զոյացուցած ըլլալով օգտակարութիւնը Խնամակալ Մարմնի մը մեր վարժարաններու համար նշանակեց Խնամակալ մարմին մը, բաղկացած եօթն անձերէ: Վստահ ենք թէ նորակազմ մարմինը իր Ատենապետութեամբ Պր.Ժորժ Պէյլէրեանի իր լաւագոյնը պիտի ընէ սատարելով մեր զոյգ վարժարաններու բարելաւման եւ կը խնդրենք մեր յարգելի ծնողներէն որ իրենց օժանդակութիւնը եւ աջակցութիւնը բերեն անոնց: Խնամակալ Մարմինը արդէն լծուած է լուրջ աշխատանքի եւ մեր ամենուս գնահատանքին արժանի է:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ.

Հայօ. Եկեղեց. Երիտ. Կազմակերպութիւնը որ կը գործէ Տասներկու տարիներէ ի վեր շատ կարեւոր դեր մը կը կատարէ մեր գաղութայնութեան մէջ: Ան յաջողած է գաղութիս երիտասարդութիւնը շուրջը հաւաքել եւ անոնց մէջ արթնցուցած է սէր հանդէպ մեր եկեղեցիին, մշակոյթին եւ գեղարուեստին:

Կ'արժէ յիշել իրենց թափած ճիգերը մեր շէնքին բարեգարդութեան համար: Այս տարի անոնք կարեւոր գումար մը յատկացուցին և յարգարեցին շէնքին մուտքի շրջափակը տալով անոր գեղեցիկ տեսարան մը: Անոնք նոյնպէս կը հրատարակեն նոր ՍԵՐՈՒՆԻ ԹԵՐԹը 1955էն ի վեր եւ թերթին գեղեցիկ և շինիչ խմբագրականները և յօդուածները հետաքրքրութեամբ կը կարդացուին մեր ժողովուրդին կողմէ մեծ թէ պատիկ: Իրենց ներկայ ուղեգրի՞ն որ ընդգրկած են մեծապէս պիտի գնահատուի ընթերցողներէն:

Ս. ԾՆՆՂԵԱՆ ՏՆՕՐՀՆԷՔ. — ԵՒ Ս. ԶԱՏԿՈՒԱՅ ՏՆՕՐՀՆԷՔ. —

Ս. Ծննդեան և Ս. Զատիկի տօներու առթիւ գեղեցիկ աւանդական սովորութիւն մը ունինք որով հոգեւոր հովիւը Տնօրհնէքի նպատակաւ կ'այցելէ Հայ քրիստոնեայ ընտանիքներու փոխադարձաբար զիրար շնորհաւորելու բարի տրամադրութեամբ:

Հայր ժիրայր Թաշմեանի փափաքին համաձայն այս առիթով հայ ընտանիքներու ընելիք նուիրատուութիւնները պիտի ընծայուին և յատկացուին եկեղեցւոյս յետ այսորիկ:

Ժխական խորհուրդս պարտք կը զգայ իր շնորհակալութիւնը յայտնել Հայր ժիրայր Թաշմեանի իր այս վեհանձն եւ ինքնաբուխ փափաքին համար:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Այսօր շուրջ մէկ տարի եղաւ որ հաճոյքը ունեցայ ծառայելու Թորոնթո- հայ համայնքին ծխական խորհուրդի Ատենապետի հանգամանքով: Իսկապէս մեծ բախտաւորութիւն մ'էր ունենալու կարող, անձնուէր և զոհաբերութեան ոգիով տոգորուած ծխական խորհուրդի պաշտօնակիցներ որոնք համերաշխութեամբ և համագործակցութեամբ ամբողջ տարի մը նուիրումով իրենց ազգային պարտականութիւնը կատարեցին օգտակար ըլլալու Թորոնթոյի գաղութին և եկեղեցիին: Այս տարին որ բոլորեցինք եղաւ փորձառական շրջան մը: Ես համոզուած եմ որ ծխական խորհուրդը յառաջիկայ տարեշրջանին պատրաստուած այս վերջացող տարուան փորձառութենէն պիտի բոլորէ բեղմնաւոր տարեշրջան մը եւս:

Միակ ցաւս այն պիտի ըլլայ որ բաժնեկից չ պիտի չկրնամ ըլլալ իրենց յառաջիկայ տարուան աշխատանքներուն որոշած ըլլալով մատուցանելու իմ հրաժարականս: Այս որոշումը ցաւով կը հաղորդեմ Ձեզի որովհետեւ ներկայիս ստանձնած եմ ծանրաբեռնուած գործ մը որ զիս զբաղ պիտի պահէ և պիտի չկրնամ օգտակար կերպով շարունակելու ծխական խորհուրդի աշխատանքները:

Հետեւաբար կը ներկայացնեմ Ձեզի իմ հրաժարականս և շնորհակալութիւնս և գնահատանքս կ'ուզեմ յայտնել Ձեզի — Հայ համայնքի բոլոր անդամներուն — որոնք ամէն կերպով օգնեցին և օժանդակեցին ինձի և պատեհութիւն տուին խաղաղ և հանդարտ մթնոլորտի մէջ վարելու աշխատանքներս:

Ի Դիմաց ծխական խորհուրդի
Ատենապետ
Օննիկ Ժալեան

1966 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՆԱԽԱՀԱՇԻՒ ԵՒ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒՆՏՈՒՈՒԹԻՒՆ.

Ծխական խորհուրդիս յաջորդ քայլը եղաւ 1966 տարեշրջանի նախահաշիւը պատրաստել, նկատի ունենալով որ այդ աշխատանքը տարուած չէր նախորդ վարչութեան կողմէ:

Ըստ 1966ի նախահաշիւին կը նախատեսուէր ընդհանուր հասոյթ Տոլար 19,830.00 և ընդհանուր ծախք տոլար 20,015.00 ցոյց տալով 715.00 բաց մը:

Ուրախ ենք յայտարարելու որ այս տարի կարելի եղաւ տարեշրջանը փակել 127.13 առաւելութիւնով փոխան նախատեսնուած 715.00 բացի:

1964ի հաշիւները ցոյց տուած են 2,785.00 Տոլար բաց, իսկ 1965ը 899.00 Տոլար բաց:

Ծխական խորհուրդս մեծ ճիգ թափեց յետնեալ անդամատուրքերը գանձելու եւ այսօր ունինք 180 Տրատու անդամներ:

Այս տարւոյ ընթացքին Դրամատան վճարեցինք 4,000.00 Տոլար որով պարտքերնիս 31 Դեկտեմբեր, 1966ին իջաւ 10,000.00 Տոլարի: Երբ նկատի առնենք Ցունուարի սկիզբը 1967 Տիկին ֆլորիքա Սէֆէրեանի ինքնաբուխ նուիրատուութիւնը 1,000.00 Տոլարի, որուն 500.00 ըստ նուիրատուին փափաքին անմիջապէս վճարուեցաւ Դրամատան պարտքերնիս իջեցնելով 9,500.00 Տոլարի:

Ծխական խորհուրդս կրցաւ ապահովել այս յաջող արդիւնքը շնորհիւ հայ համայնքին նիւթական աջակցութեան որ ան կատարեց գանազան առիթներով որուն համար մեր գնահատանքը և շնորհակալութիւնները կը յայտնենք:

HOLY TRINITY ARMENIAN CHURCH

FINANCIAL STATEMENT, JANUARY 1, TO DECEMBER 31, 1966.

RECEIPTS

| | |
|---------------------------------|--------------------|
| Parish Dues | \$ 4,440.00 |
| Plate Collections | 3,119.85 |
| Donations | 19,047.50 |
| General Affairs, gross | 4,441.14 |
| Ceremonies, net | 1,676.48 |
| Social Affairs, net | 350.00 |
| Donations towards Church School | 2,952.84 |
| Donations in goods | 654.98 |
| Miscellaneous | 275.96 |
| Acct. Receivable, S. Adourian | 200.00 |
| Total | <u>\$37,158.75</u> |

DISBURSEMENTS

| | |
|---|--------------------|
| Pastor; stipend (\$30.00/wk.) | \$ 1,560.00 |
| Pastor; living allowance (\$60.00/mo.) | 720.00 |
| Pastor; mance allowance | 600.00 |
| Pastor, car allowance (\$0.10/mile) | 1,840.00 |
| Services (heat, light, water, ...) | 907.05 |
| Diocese Dues | 972.50 |
| General Affairs | 2,894.89 |
| Office Expenses | 1,116.68 |
| Building Maintenance | 1,771.11 |
| Church Supplies | 379.79 |
| Bank Interest | 777.19 |
| Church School Expenses | 2,846.90 |
| Donations towards: Diocese Cathedral Fund | 10,000.00 |
| Evanston Seminary College | 1,110.00 |
| Goods received as donations | 654.98 |
| Miscellaneous (visiting clergy, etc...) | 1,486.78 |
| Acct. Payable, S. Adourian | 200.00 |
| Total | <u>\$29,837.87</u> |
| Surplus of Receipts | \$ 7,320.88 |

HOLY TRINITY ARMENIAN CHURCH

FINANCIAL STATEMENT, JANUARY 1, TO DECEMBER 31, 1966.

(CONT'D.)

Cash on hand, January 1, 1966 \$ 954.31

Appropriation of Surplus:

| | | |
|--------------------------------|-----------------|---------------|
| Payment against bank loan | \$ 4,000.00* | |
| Reserve toward 1967 donations: | | |
| - To cathedral fund | 3,168.75 | |
| - To Istanbul Patriarchate | 25.00 | |
| Served into Current Acct. | 127.13 | <u>127.13</u> |
| | <u>7,320.88</u> | |

Cash on hand, December 31, 1966 1,081.44

Liability

| | | |
|-------------------------------------|------------------|--|
| Bank loan, January 1, 1966 | 14,000.00 | |
| Payment against loan | <u>4,000.00*</u> | |
| Outstanding loan, December 31, 1966 | 10,000.00 | |

Signed: For Parish Council: Mr. O. Dzalian, Chairman
Mr. H. Artinian, Treasurer

Audited by: Messrs. Y. Boyadjian
G. Elmassian
Z. Mesrobian

On: January 24, 1967.

HOLY TRINITY ARMENIAN CHURCH

PROPOSED BUDGET - 1967

RECEIPTS

| | |
|----------------------------|----------|
| Parish Dues | \$ 3,500 |
| Plate Collection | 3,200 |
| Ceremonies | 1,800 |
| Hall Income | 350 |
| Donations - Church School | 15,000 |
| Donations - Cathedral Fund | 10,000 |
| Donations | 6,000 |
| Donations - In Kind | 650 |
| General Affairs | 5,000 |
| A/C Receivable-Adourian | 200 |

DISBURSEMENTS

| | |
|-------------------------------|------------------|
| Pastor, Stipend | \$ 1,560 |
| Pastor, Living Allowance | 1,000 |
| Pastor, Manse Allowance | 600 |
| Pastor Car Allowance | 1,840 |
| Heat, Light, Water | 1,000 |
| Building Maintenance, Repairs | |
| Cleaning | 2,000 |
| Diocesan Dues | 980 |
| General Affairs | 3,000 |
| Office Expenses | 1,300 |
| Church Supplies | 400 |
| Bank Interest | 550 |
| Visiting Clergy & Others | 1,500 |
| Flowers | 150 |
| Donations-In Kind | 650 |
| Travelling - Rev. J. Tashjian | 150 |
| Cathedral Payment | 10,000 |
| Bank Loan | 4,000 |
| Church School | 5,000 |
| Surplus | 20 |
| | \$ <u>35,700</u> |

\$ 35,700

\$ 35,700

ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը ուրախութեամբ կու գայ հրապարակել իր 1966 տարւոյ նիւթաբարոյական տեղեկատուութիւնը եւ ծանուցանել Թորոնթոյայ ժողովուրդին թէ՛ ունեցած է բեղմնաւոր տարի մը իր հասոյթաբեր ձեռնարկներով:

Միութեանս անդամներուն թիւը այս տարի բարձրացած է 55էն 71ի:

Միութեանս Վարչութիւնը կազմուած է 6 անդամուհիներէ ,պատուոյ ատենապետուհի Տիկին Հելէն Ունճեանի,ատենապետուհի Տիկին Սոնա Թորոսեանի:

Առաջին ընտրական ժողովէն զատ վարչութիւնը ունեցած է 5 վարչական ժողով, 3 ընդհանուր ժողով եւ 1 միացեալ ժողով:

Միութիւնս ունի 2 յանձնախումբ, մին՝ հիւանդաց այցելութեան եւ միւսը՝ նորեկ ընտանիքներու այցելութեան:

1966 տարւոյ ընթացքին Միութիւնս ունեցած է 2 հասոյթաբեր ձեռնարկներ: Ա.— Պարահանդէս, Բ.— Տարեկան Պագար:

Միութիւնս ծխական Խորհուրդի տարեկան մեծ դաշտահանդէսին իր օժանդակութիւնը բերած է իր գործունէութեամբ եւ համադամ խմորեղէններու նուիրատուութեամբ: Ունեցած է նաեւ Մեծ Պահոց Միջինքի ականդական սեղանը եւ Ս.Ջատկուայ հաւկթախաղը եւ երկու թէյյասեղան մին ի պատիւ Առաջնորդ Ս.Հօր հովուական այցելութեան իսկ միւսը քաղաքս նոր ժամանած հայ տիկիներուն:

Հաճոյքով կ'արձանագրենք թէ Միութիւնս եկեղեցւոյ 13րդ տարեդարձին օրը առաջին նուիրատուն եղաւ որ ՀԱԶԱՐ ՏՈՒՄԻ նիւթական շօշափելի օժանդակութեամբ իր մասնակցութիւնը բերաւ ծխական Խորհուրդի ջանքերուն, արժանանալով ներկաներուն ծափահարութեան ու արդար զնահատանքին: Ուրիշ առիթներով եւս ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՈՒԹԸ ՀԱՐԻՒՐ տուարի գումար մը յանձնած ենք պատուարժան ծխական Խորհուրդին:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս Տիկին Շաքէ Յովհաննէսեան սիրայ օժար յանձն առաւ պատրաստելու Ս.Պատարագի Մասը:

Միութիւնս իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ պատուոյ ատենապետուհի Տիկին Հելէն Ունճեանին,որ սիրայ օժար ու բարեպաշտական զգացումներով յանձն առաւ կատարել Ս.Սեղանի ձեռագործ ծածկոցներու մաքրութիւնը, ինչպէս նաեւ Պր.Յովսէփ Դաւիթեանին որ ինչպէս միշտ այս տարի եւս յանձն առաւ ճաշի սեղաններու ծածկոցները ձրիաբար լուալու եւ արդուկելու:

Ատենադպրուհի

ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ
ՇՈՒՂԱՆ ՏԷԻՐՄԷՆՃԵԱՆ

HOLY TRINITY ARMENIAN CHURCH

FINANCIAL STATEMENT - 1966

LADIES AUXILIARY

Cash on hand, January 1, 1966 \$410.36

RECEIPTS

| | | |
|-----------------|-----------|------------|
| Membership dues | \$ 198.00 | |
| Donations | 229.35 | |
| Affairs | 3,270.71 | |
| Bank interest | 4.63 | |
| Total | | \$3,702.69 |

DISBURSEMENTS

| | | |
|---------------------|----------|------------|
| Maid Service | 64.20 | |
| Food and Catering | 1,362.68 | |
| Flowers and Gifts | 29.62 | |
| Office Expenses | 72.26 | |
| Donations to Church | 2,087.35 | |
| Total | | \$3,616.11 |

Excess of receipts \$ 86.58

Cash on hand, December 31, 1966 \$496.94

Cash Details

| | | |
|-----------------------------|----|------------------|
| - In Petty Cash | : | \$ 15.73 |
| - Cn. Imp. Bk. of Commerce: | \$ | 453.13 |
| - Toronto Dominion Bank: | \$ | 28.08 |
| | | <u>\$ 496.94</u> |

A.C.Y.O.A. ANNUAL REPORT

This year, as in previous years, the A.C.Y.O.A. was very active in its role of serving its members, Church and community. The following is a short summary:-

A.C.Y.O.A. ACTIVITIES FOR MEMBERS ONLY

Picnic at Wassaga Beach - August, 1966
Toronto-Montreal A.C.Y.O.A. joint picnic, near Kingston-Aug., 66
A.C.Y.O.A. Communion Sunday - November, 1966
Movie Night - Two colour movies were shown - January, 1967
Career Night - Three speakers talked on Law, Teaching and
Engineering - January 1967
Dr. A. E. Safarian will speak on his impression of Armenia -
February, 1967.

A.C.Y.O.A. ACTIVITIES FOR THE COMMUNITY

| | |
|-------------------------------|-------------------|
| The A.C.Y.O.A. Annual Picnic | - July, 1966 |
| "Autumn Leaves" Dance | - September, 1966 |
| New Year's Eve Dance | - December, 1966 |
| Anniversary Ball (Masquerade) | - February, 1967 |

General

Seven General Meetings were held during the period of August, 1966 to January, 1967.

A.C.Y.O.A. has also sponsored a contest for the design of a new "NOR SERCUNT" cover.

HOLY TRINITY ARMENIAN CHURCH

FINANCIAL STATEMENT - JULY 1, TO DECEMBER 31, 1966

A. C. Y. O. A.

RECEIPTS

| | | |
|-----------------------------|-----------------|--|
| Cash on hand - July 1, 1966 | | \$1,240.75 |
| Picnic | \$ 192.75 | |
| Membership dues | 152.00 | |
| Dance | 463.09 | |
| Banquet | 133.50 | |
| New Year's Eve | <u>1,815.00</u> | |
| Total | | <u>\$2,756.34</u> <u>\$3,997.09</u> |

DISBURSEMENTS

| | | |
|-----------------------------------|---------------|-------------------|
| Dance | 281.24 | |
| Gardener | 465.00 | |
| Annual Delegate | 37.45 | |
| Stamps | 28.48 | |
| Dishes | 2.49 | |
| Food | 83.80 | |
| Miscellaneous | 30.69 | |
| Donation to H.T.A. Church | 700.00 | |
| New Year's Eve | 1,004.30 | |
| Robbery | 73.46 | |
| Group activities | 22.00 | |
| A.C.Y.O.A. Chapter Tax | <u>286.44</u> | |
| | | <u>\$3,015.35</u> |
| Cash on hand - December 31, 1966. | | <u>\$ 981.74</u> |

1966 տարուան ընթացքին, վստահ ենք որ Ձեռն է իւրաքանչիւրը
ջանաց իր հոգեկան գոհացումը ստանալ եկեղեցի զաւով ու աղօթելով:

Դպրաց Դասն ալ իր բաժինը բերած է ու կը բերէ այդ արարողու-
թիւնը աւելի հոգեպարար դարձնելու աշխատանքին ու նուիրումին մէջ:
Միտակ է որ մեծ թիւով դպիրներ շապիկ չեն հագած իւրաքանչիւր պատա-
րագին, բայց, մենք ջանացած ենք զոնէ փոքր խումբերով տանիլ այդ
հաճելի պարտականութիւնը, որը մերը եղած է այսքան երկար ժամանակ
մասնակից դառնալով եկեղեցական երգեցողութեանց պատարագի բաժնին:

Անդամներու թիւը բարձր է, եթէ նկատի ունենանք ամէն անոնք,
որոնք զոնէ ամիսը մէկ անգամ կը ջանան ներկայ ըլլալ պատարագին
շապիկ հագնելով:

Ինչպէս թերեւս Ձեր ուշադրութիւնէն չէ վրիպած, տեսած էք որ
երգեցողին վրայ յաճախ մէկէ աւելի Տիկիներ կը նուագեն, այս թիւը
բարձրացած է երեքի, յանձինս Տիկիներ Զրիստինէ Գուլումմեանի,
Արաքսի Գասարմեանի եւ Արփի Մերասի, որոնք կը ջանան կանոնաւորաբար
ներկայ ըլլալ թէ փորձերու եւ թէ պատարագին, իրենց համեստ բաժինը
բերելով: Սոյն Տիկիները, մասնաւորաբար Երգեցողի դասընթացքի մըն
ալ կը հետեւին, որուն ծախսը կը հոգայ Դպրաց Դասը:

Դպրաց Դասի կողմէն կայ նաեւ Սարկաւագաց խումբը որը նախորդին
նման ջանացած է իր ներկայութեամբ մասնակցիլ Աստուծոյ փառաբանանքին:

Վերջին շուրջ երեք ամիսներու ընթացքին, կանոնաւոր շաբաթական
փորձեր կատարելու աշխատանքին լծուած են թէ Դպրաց Դասը եւ թէ Սար-
կաւագները: Վստահ ենք որ այն սխալները, որոնք կը պատահին երգեցո-
ղութեան ընթացքին, ժամանակի ընթացքին պիտի ճշդուին աւելի ներդա-
նակօրէն երգելու պատարագը:

Ժխական Խորհուրդի բարիկամեցողութեամբ եւ նիւթական օժանդակու-
թեամբ անցեալ նոյեմբերին Դպրապետն ու Դպրաց Դասի ատենապետը ղրկուե-
ցան Բիշմընտ Վիրժինիա Դպրաց Դասի Համագումարին:

Հոս հարկ է յիշել այն իրողութիւնները թէ, պտոյտ մը չէր կատար-
ւածը այլ պարտականութիւն: Համագումարի տեւողութեան եղած աշխատանք-
ները զոնէ մեզի համար եղան շինիչ եւ քաջալերիչ: Առաջնորդ Ս. Հօր
ներկայութիւնը մղիչ ուժ մըն էր տարուած բոլոր աշխատանքներուն մէջ,
եւ իր ցուցմունքներով օգտակարութիւնը ունեցաւ: Լաւ պիտի ըլլալ որ,
ամէն տարի այդ Համագումարին Թորոնթոյէն աւելի մեծ թիւով անդամներ
ներկայ ըլլային, նոյնիսկ դիտողի աչքով, օգտուելու հոն տարուած
աշխատանքներէն: Յաջորդ Համագումարին վայրն է Վաշինգտոն Տի Սի :

Նախքան փակելը այս տեղեկագրին Ընդհանուր ժողովիդ եւ մասնա-
ւորաբար գաղութիս հայութեան հետեւեալ կէտերը կ' ուզենք ներկայացնել:—

- ա. Ձայն ունեցող եւ երգ սիրող ու պարտաճանաչ անձերու պէտքը
կայ Դպրաց Դասէն ներս, Արական կամ Իգական սեռի պատկանող,
պիտի խնդրէինք որ այդ յատկութիւն ունեցող անձերը մօտենային
արձանագրուելու, հովիւին, Դպրապետին եւ կամ Դպրաց Դասի
ատենապետին մօտ:
- բ. — Շապիկ հագնիլ փափարողները, պարտին փորձերու ներկայ ըլլալ,
ներդաշնակութիւնը պահելու համար, այլապէս այդպիսիներուն
համար մասնաւոր աշխատանք պիտի տարուի պատարագի պահուն
Դպրապետին ուշադրութիւնը կեդրոնացնելու:
- գ. — Պիտի փափաքէինք տեսնել որ ՈՉ Դպրաց Դասի անդամ մը շապիկ
հագուելու աշխատանքին չի լծուիր, իր անցեալին ունեցած
փորձառութեանը վրայ հիմնուելով, ընդհակառակն, պիտի խնդրէինք
որ այդպիսիները մօտենան Դպրապետին եւ արտօնութիւն խնդրէին
փոխանակ իրենք իրենց երթալ ու շապիկ հագուելու:

Ընդհանուր ժողովիդ կ' ուզենք մաղթել, յաջողութիւն, իրագործելու

Ճամբուն մէջ դնելու իր բոլոր ծրագիրները:

Մասնաւոր շնորհակալութիւն մեր ժրաջան հովիւին որը իր յաճախակի ներկայութեամբ, օգտակար դարձած է երգերու ուսուցման: Իսկ երգեհոնի նուագող Տիկիններուն շնորհակալութիւն իրենց զոհողութեան համար: Դպրաց Դասի անդամներուն եւ Սարկաւազներուն յարատեւութիւն եւ պարտականութեան գիտակցութիւն անոնց՝ որոնց ըով սկսած է պակսիլ այդ մարմաջը:

Ի դիմաց Դպրաց Դասի

Դպրապետ
Արթըր Սէլեան

Ատենապետ
Ա Վարդան Վարդանեան

HOLY TRINITY ARMENIAN CHURCH

CHOIR

FINANCIAL STATEMENT 1965

| | | |
|--------------------------------|----|---------------|
| Receipts | \$ | 266.04 |
| Expenditures | | <u>268.04</u> |
| Deficit | | 2.00 |
| Cash on hand January 1, 1965 | | 212.53 |
| Deficit | | <u>2.00</u> |
| Cash on hand December 31, 1965 | \$ | <u>210.53</u> |

FINANCIAL STATEMENT 1966

| | | |
|--------------------------------|----|---------------|
| Receipts | \$ | 92.72 |
| Expenditures | | <u>81.45</u> |
| Surplus | | 11.27 |
| Cash on hand January 1, 1966 | | 210.53 |
| Surplus | | <u>11.27</u> |
| Cash on hand December 31, 1966 | \$ | <u>221.80</u> |

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Յ1 Դեկտ. 1966

Ս. Սահակ և Ս. Մեսրոպ Ազգ. Վարժարանիս պատմութեան մէջ 1966—1967 տարեշրջանը անկասկած պիտի զրաւէ իր եզական դիրքը պարզ այն պատճառաւ թէ Վարժարանիս նիւթական և կարգ մը վարչական ու բարոյական խնամքը այլեւս կը յանձնուէր խնամակալ մարմնի մը ու ուսուցչաց կազմին առիթը կը տրուէր որ անոնք զբաղէին զուտ դաստիարակչական գործով:

Ժխական խորհուրդին կողմէ հրաւիրեալ խնամակալ մարմինս ծխական խորհուրդոյ անդամներուն ալ մասնակցութեամբ իր առաջին հաւաքոյթը ունեցաւ 9 Օգոստոս, 1966ի երեկոյեան որուն ընթացքին անդամներուն պարզուեցաւ Խնամակալութեան մը անհրաժեշտութիւնը ու անկէ սպասուած ակնկալութիւնները. ի միջի այլոց յայտնուեցաւ նաև թէ Խնամակալ մարմինը պիտի ստանձնէր նաև Ս. Երրորդութիւն եկեղեցւոյս Կիրակնօրեայ Դպրոցի հոգատարութիւնը: Խնամակալ մարմնի հրաւիրեալ թեկնածուները ընդունելով իրենց եղած առաջարկը 12 Օգոստոս, 1966ի երեկոյեան զուամարեցին իրենց անդրանիկ ժողովը ու կազմեցին իրենց հետեւեալ դիւանը.—

- | | |
|-----------|-------------------------|
| Նախագահ | Հայր Ժիրայր Թաշճեան |
| Ատենապետ | Տիար Ծորճ Պէյլէրեան |
| Ատենադպիր | Տիար Անդրէաս Գալայճեան |
| Գանձապահ | Օր. Սիպիլ Պալպանեան |
| Անդամներ | Տիար Գէորգ Գոլուշեան |
| | Տիար Պետրոս Զիլինկիրեան |
| | Տիար Տիգրան Դազարեան |
| | Պարոն Արթի Յակոբեան |

Անմիջական յաջորդող նիստերուն, Մարմինս խորհրդակցելով նաև նախորդ տարիներու տնօրէններուն հետ, ջանաց Վերամուտի վերաբերեալ կարգադրութիւնները ընել որոնցմէ կարեւորագոյնները եղան կարող և զօրաւոր ուսուցչաց կազմի մը ընտրութիւնը եւ աշակերտութեան երթեւեկը ապահովող պասերու սպասարկութեան կարգադրութիւնը: Տեղի անբաւարարութիւնը չափով մը զոնէ պակսեցնելու նպատակաւ Խնամակալութիւնս փորձեց հանդիպակաց Արաբախօս Կրիստոնեայ Օրթոտոքսներու եկեղեցւոյ Սրահը վարձել ու Մանկապարտէզի գործածել զայն: Այս ուղղութեամբ կատարուող ջանքերը սակայն դժբախտաբար ապարդիւն մնացին:

Ժողովս նկատի ունենալով Ս. Սահակ և Ս. Մեսրոպ Ազգային Վարժարանիս յոյժ կարեւորութիւնը եւ լաւ կազմակերպուած Վերամուտի մը անհրաժեշտութեան ու օգուտներուն որոշեց Կիրակնօրեայ Դպրոցին Վերամուտը յետաձգել

մինչեւ 28 Հոկտեմբեր, 1966 ու առ այդ ոյժերը կեդրոնացնել Ս.Սահակ և Ս.Մեսրոպ Վարժարանին վրայ:

Վարժարանիս Վերամուտը տեղի ունեցաւ 24 Սեպտեմբեր, 1966ի Շաբաթ առաւօտեան ժամը 10.00ին, Ս.Երրորդութիւն Եկեղեցւոյ Սրահին մէջ մօտաւորապէս 110 աշակերտներով-այժմ թիւը 115 է-որոնք բաժնուեցան Մանկապարտէզի չորս եւ նախակրթարանի եօթն դասարաններու վրայ:

Ներկայ Ուսուցչական կազմը կը բաղկանայ հետեւեալ անձերէ.-

ԸՆԴՀ. ՏՆՕՐԷՆՈՒՀԻ ՏԻԿ.ՏԻԳՐԱՆՈՒՆԻ ԱՐԹԻՆԵԱՆ

Բողոք՝ Դասարան

Օր.Ալիս Խունկանեան

Կոկոն ,,

Օր.Սոնա Խունկանեան

Ծաղիկ ,,

ՏԻԿ.ՍԻԼՎԱՆ ՂՈԼԿԱՍԵԱՆ

Ծաղիկ ,, Բ.

ՏԻԿ.ԱՐՓԻ ՄԵՐԱՍ

Վարիչ Մանկապարտէզականու ՏԻԿ.Աղաւնի Գարակէօզեան

Նախապատրաստական

ՏԻԿ.Շաքէ Արթինեան

Ա. Դասարան

Պարոն Պետրոս Չիլինկիրեան

Ա. ,, Երկրորդ բաժանում

ՏԻԿ.ՊԵՐԾՈՒՆԻ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Բ. Դասարան

Օր.Մառօ Դանիէլեան

Գ. Դասարան

Պարոն Կարօ Տէիրմէնճեան

Դ. Դասարան

Օր.Սիլվա Պապեան

Զ. Դասարան

ՏԻԿ.ՏԻԳՐԱՆՈՒՆԻ ԱՐԹԻՆԵԱՆ ՆԱԽԱՎԷՍ

Այժմ՝ Պարոն Աբիկ Սվաճեան

Պահեստի ուսուցչուհիներ

ՏԻԿ.Զապէլ Խունկանեան

ՏԻԿ.ՍԵՂԱ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Երգի դասը նախապէս ստանձնած էր Հայր Ժիրայր Թաշմեան, որուն դաշնակով կ'օժանդակէր Տիկին Արաքսի Գասարմեան, այժմ երգի դասը ստանձնած է Տիկ.Լուսի Քէօզկէրեան միացեալ ջանքերովը Տիկին Արաքսի Գասարմեանի դաշնակի ընկերակցութեամբ:

Այս տարի բացառաբար վերջի դասարանին աշակերտութեան փոխան երգի Հայոց Պատմութիւն կը դասաւանդուի Պարոն Պետրոս Չիլինկիրեանի ջանքերով:

Վերոյիշեալ ուսուցչաց կազմին կողմէ կատարուած բոլոր գործունէութիւնները կ'ըլլան առանց վարձատրութեան եւ կատարեալ սիրայօժար նուիրումով:

Այս տարի Վարժարանս ունեցաւ նաեւ իր հոգատար Տնտեսը, դպրոցի ընդհանուր կարգապահութեան հսկելու համար, այժմու Տնտեսն է Պարոն Վարդերես Պալեան, որը իրեն յատուկ պարտաճանաչութեամբ կը ջանայ օգտակար ըլլալ դպրոցին կարգապահութեան:

Աշակերտութեան երթեւեկը մեծամասնութեամբ կը կատարուի Կեց դպրոցական Օթոպիւսներով որոնք կը փոխադրեն 92 աշակերտներ ու շաբաթը կը ստանան 90.00 Տոլար, որուն 60 առ հարիւրը կը գանձուի աշակերտներէ իբր փոխադրութեան նուիրատուութիւն իւրաքանչիւր աշակերտէ ստանալով 20.00 Տոլար տարեկան: Բաց աստի իւրաքանչիւր աշակերտ կը վճարէ նաեւ 5.00 Տոլար, իր արձանագրութեան օրը, իբր Մուտքի տուրք:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐՃԱՐԱՆ

Կիրակնօրեայ Վարժարանիս Վերամուտը կատարուեցաւ Կիրակի 28 Հոկտեմբեր 1966 առաւօտեան ժամը 11.00ին:

Վարժարանիս Տեսչութեան պաշտօնը այս տարի սիրայօժար կերպով ստանձնեց փորձառու Մանկապարտէզպանուհի Տիկին Աղաւնի Գարակէօզեան որուն կը գործակցին Պարոններ ժան Նահապետեան և Մուրատ Պահուտեան

Դպրոցիս աշակերտութեան ներկայ թիւն է 25, դժբախտաբար չունի Օթօպիւսի սպասարկութիւն, տիրող կարգ մը նիւթական աննպաստ պայմաններուն պատճառաւ:

Կիրակնօրեայ Դպրոցին նպատակն է Զրիստոնէական Դաստիարակութիւն տալ Հայ Եկեղեցւոյ զաւակներուն:

ՅԱՏԿԱՆՇԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերոյիշեալ բոլոր կարգադրութիւններէն զատ Խնամակալութիւնս զոյգ Վարժարաններու Տնօրէնութեանց կատարեալ աջակցութեամբ կազմակերպած է հետեւեալ գործունէութիւնները.—

ա. Պարբերական շրջաբերական նամակներով ջանացած է մօտէն տեղեակ պահել ծնողները, դպրոցին կարգ մը հարցերով:

բ. 24 Դեկտեմբեր, 1966 Շաբաթ առաւօտեան աշակերտութեան մատուցուած է յատուկ Ս. Պատարագ եւ Ս. Հաղորդութիւն, որուն յաջորդած է Ամանորի խրախմանութիւնները ու նուիրաբաշխումը ընդհանուր աշակերտութեան:

գ. Հիւսիսային Ամերիկայի Հայոց նորընտիր Առաջնորդ Գերաշնորհ Տ. Թորգոմ Ս. Եպիսկոպոս Մանուկեանի այցելութեան առիթով Կիրակնօրեայ Վարժարանիս սան—սանուհիները ներկայացուցած են Ս. Ծնունդի կենդանի պատկերը, որը ջերմապէս գնահատուած է բոլոր ներկաներուն կողմէ:

դ. 18 Յունուար, 1967 Ծնողական—Ուսուցչական հաւաքոյթ մը սարքուած է, որուն ընթացքին Տնօրէնուհի Տիկ. Տիգրանուհի Արթինեան պարզեց դպրոցէն ներս կատարուող գործունէութիւնները զեղեցիկ բանախօսութեամբ մը, եւ ի մասնաւորի շեշտեց կարեւորութիւնը այն ակնկալութեան զոր Վարժարանը կը սպասէ իւրաքանչիւր դպրոցասէր ծնողներէն, իրենց իսկ զաւակներուն

հայեցի դաստիարակութեան մարզին մէջ, այս կերպով ծնողք եւս իրենց աջակցութիւնը բերելու համար Վարժարանիս յառաջդիմութեան ու բարգաւաճման:

Ինչպէս ակներեւ է վերի բոլոր բացատրութիւններէն Խնամակալ Մարմինս ու Ուսուցչական զոյգ կազմերը ըրած են ու կ'ընեն իրենց կարելին զոյգ վարժարաններուն վերելքին համար, ճիշտ է որ ի մասնաւորի կան նիւթական որոշ դժուարութիւններ, որոնք պատճառ կը հանդիսանան վարժարաններուն վերելքին անհրաժեշտ աւելի խիզախ քայլեր առնուելուն: Խնամակալութիւնս այս ուղղութեամբ ալ սկսած է լուրջ խորհրդակցութեանց, ապահովելով նաեւ ծխական խորհուրդին ալ համամտութիւնը:

Վստահ ենք որ օտար այս ասիերուն վրայ օրէ օր աճող զաղութիս հայապահպանման ռահվիրան հանդիսացող Ս.Սահակ և Ս.Մեսրոպ Ազգային Վարժարանին վերելքին համար կատարուող ու կատարուելիք ամէն մէկ ջանք պիտի կատարեալ աջակցութիւնը ստանայ թէ ծխական խորհուրդին եւ թէ համայն հայ զաղութին:

ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ

4 Փետրուար, 1967

Income-Expenses up to December 31, 1966

Income

| | | |
|----------------|----------------|---------|
| Parish Council | \$ 451.53 | |
| Donations | 715.00 | |
| Students | <u>1850.00</u> | 3016.53 |

Expenses

| | | |
|-----------------------|--------------|----------------|
| Transportation | \$ 1260.00 | |
| Janitor | 95.00 | |
| Stamps | 12.25 | |
| Books & Note Books | 138.06 | |
| Printing(book covers) | 72.26 | |
| Chalk & Etc. | 9.55 | |
| Christmas Toys | 78.04 | |
| Soft drinks | <u>19.51</u> | <u>1684.67</u> |
| | | <u>1331.86</u> |

Signed By S.Balabanian
G.Beylerian